կան նուաւ Խնծրusանայ գեղին. շինեց յիշատակ- Ասուածածնայ սուրբ եկեղեցին, ամի վախճանեցաւ :ՌՄԻԶ: (1777) թուականին:

Հրատ. Բարխուդարեանց, 160։

37. ԽԱՆՁՔ ԳՅՈՒՂ

Գյուղի շրջակայքում կան մի քանի գյուղատեղեր, հասարակ մատուռներ և ղերեզմանաններ։ Արձանագրություն ունեցողները հետևյալներն են.

***482. ԽԱՉՔԱՐ**, մեծ. գտնվում է գյուղի եղրին, շուրջն ընկած են երեք քարեր՝ առանց գրության. ստորին մասում կիսեղծ 8 տող.*

ՅԱՆՈՒՆ ՅԲ ԵՐՐՈՐԴ
ՌԵԱՆԵՍ ՍՈՍՍՈ
ԱՆԷՍՈՒԲԱՐՍԵՂԿԱՆԳ
ՆԵՑԱՔՋԽԱՉԱՀԱՐՄՆՐՈՅՀԱՅՐԱ
ՊԵՏԱՅԵՒՄԱՒՐՄԵՐ
ՈՅՀՌԱՄՍԻՄԻՆՈՐՔԵՐԿՐ
. . . . . ԱՂԱՌՍ
ՅԻՂԵԼ· ·

ՅԱՆՈՒՆ ՅԲ. ԵՐՐՈՐԴԼՈՒՅԹԵԱՆ. ԵՍ ՍՈՍՍԱՆԷՍ ՈՒ ԲԱՐՍԵՂ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ՄԵՐՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ԵՒ ՄԱՒՐ ՄԵՐՈՑ ՀՌԱՄՍԻՄԻՆ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ԱՂԱՋԵՄՔ ՅԱՂԱՐԹՍ ՅԻՇԵԼ Ը:ԶԲ:ՙ (1253):

Ծանոթ. Թվականի տառերը բոլորովին աննշմար են այժմ, լրացնում ենք ըստ հրատարակչի։

Հրատ. Բարխուդարեանց, 159։

***483. ԽԱՉՔԱՐԻ** վրա, որը կանգնած է եղել գյուղամիջի ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմում.*

Թիւն :ՈՀԹ: (1230). ես Հայրապետ, Պետրոս, Վարդ·ն, Ցոհան կանգնեցաք զխաչս մաւրն մեր, որ բարեպաշտ, աղխատասէր էր. յաղաւթս յիշեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 159։ Ջալալեանց, II, 343։

***484. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ**, եկեղեցու մուտքի ճակատակալ քարին.*

ի :ՌՃԻԲ: (1673) թվին. ես Պետրոս կաթողիկոս Աղուանից ի գեղջէս Խանցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Ադխանն և աւաք եղբայրն իմ Իշխանն և իւր որդիքն Ովանէսն, Պապաջանն և իւր թոռ Մանկասարն և տաս Խաթունն շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց:

Հրատ. Բարխուդարեանց, 159, Ջալալեանց, II, 343։

38. ԴԱՀՐԱՎ ԳՅՈՒՂ

Արցախում երկու վայրեր են եղել, ուր կառուցվել են խմբովին որմնափակ խաչքարեր՝ պսակված գեղեցիկ ճակտոնով։ Թեև դրանց որմերը շինված են գլխավորապես ճեղքված և անմշակ քարերից, բայց երկու տեղում էլ բուն խաչքարերը և նրանց կիսակամար ճակատաքարերը զարդարված են մեծարվեստ քանդակներով։ Խաչքարերը բոլոր դեպքերում էլ տեղադրված են մեծ խորություն ունեցող խորանների մեջ, որպիսի հանգամանքը շփոթության մեջ է գցել Բարխուդարյանցին, որը դրանք համարել է «բեմ»։

Նշված վայրերից մեկը Վարանդա գավառի Նորաշեն և Հացի գյուղերի արանքում եղած «Բռի եղցի» կոչվածն է և երկրորդը՝ այս, Դահրավ գյուղից դեպի հյուսիսարևմուտք, մոտ երկու կիլոմետր հեռու սարալանջը՝ ս. Նահատակ կոչված մատուռի շրջակայքը։ Անցյալում այստեղ կանգնած են եղել երեք որմնափակ խաչքարեր, այժմ միայն մեկն է կանգուն, իսկ մյուսների հետքերն են երևում։ Ս. Նահատակ մատուռի պատերի ստորին մասերը կան միայն՝ շարված քարի մեծ կտորներով։

485. ԽԱՉՔԱՐ, ուղղանկյուն, կանգնած է ձորի շրթունքին, մատուռի արևելյան կողմում, կիսակամար ճակատաքարին 6 տող.

ԻԹՎ ՋԻԵ ԵՍ ՀԱՍ
ԱՆ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ԿԱՆԳ
ՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԵՂԲԱԻՐ ԻՍ
ՋՈՒՐՋԻՆ ՈՒՔԱՆԱ Ի ՓՐԿՈՒ
ԹԻ ՀՈԳՈՅ ՈՎ ԿԱՐԴԷՔ
. . . . ՇԵՔ Ի ՏՐ

Ի ԹՎ⌈ԻՆ⌉ :ՋԻԵ: (1276). ԵՍ ՀԱՍ|ԱՆ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ԿԱՆԳ|ՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԵՂԲԱԻՐ ԻՄ ՋՈՒՐՋԻՆ, ՈՒՔԱՆԱ. Ի ՓՐԿՈՒ|ԹԻ. ՀՈԳՈՅ. ՈՎ ԿԱՐԴԷՔ| ⌈ՅԻ⌉ՇԵՔ Ի ՏՐ.:

Հրատ. Բարխուդարեան, 156.

486. ԽԱՉՔԱՐ, ուղղանկյուն, կանգնած է եղել նախորդից մոտ 20 մետր հեռու. վրան եղել է՝

Թիւ :ՇԻ: ես Ոհան կանգնեցի զխաչս ինձ և ամուսին իմ Թիթեղնիկայ. աղաւթքս յիշեցէք:

Հրատ. Բարխուդարեան, 156.

39. ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ

Քաղաքում հին հուշարձաններ և արձանագրություններ չեն նկատվել: Մինչև ավերումը կային հետևյալ եկեղեցիները և հուշարձանները:

Ա. Ղազանչեցոց եկեղեցի *(Ամենափրկիչ). հիմնադրվել է 1868 թ. և ավարտվել 1878 թ.: Այստեղ պահվող մասանց տուփերի վրա եղել են հետևյալ արձանագրությունները.*

487. ՈՍԿԵՁՈՒՅ ԱՋ ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ, վրան՝

Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին, թոռին սրբոյ Լուսաւորչին. նորոգող սորա տէր Յովհաննէս որդի Տաւութին, թոռն Պաղդասարին, որ է որդի Մէհրապ պէկին՝ տեառն Խաչենոյ. թվ. :ՌՀ: (1621). Արուեսի Գալուս:

488. ՆՈՒՅՆԻ վրա հետագայում գրված՝

Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրամ Բէկ Մէլիք Ջիմշիտեան Մէլիք Շահնազարովն :ՌՄԿԱ: էր (1812):

Հրատ. Բարխուդարեան, 141.

489. ՄԱՍՆԱՏՈՒՓԻ վրա

:ՌՃԹ: (1660):

Հրատ. Բարխուդարեան, 141.

490. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գտնվելիս է եղել Գավթի հյուսիսային կողմում. վրան հովվական գավազան.

Վիճակաւոր առաջնորդ թէմին Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս Պօլսեցի. վախճանեալ է 8 սեպ. 1882 ամի. ի հասակի 48 ամաց:

Հրատ. Բարխուդարեան, 142.

Բ. Ագուլեցոց եկեղեցի. *(սբ. Աստվածածին). շինվել է 1822 թվականին.*

491. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ ՄԱՍՆԱՏՈՒՓԻ վրա.

Յիշատակ է Ջարեքու Մկրտիչ վարդապետին և իւր ծնողացն. թվ՝ի՝ն. :ՌՃՁԸ: (1739) փետրվարի . . . :

Հրատ. Բարխուդարեան, 144.